ԵՎՐԱՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Բրյուսել, 3.7.2008
COM (2008) 425 վերջնական

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ, ԽՈՐՀՐԴԻՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ

## Կարողությունների բարելավում 21-րդ դարի համար. դպրոցների վերաբերյալ Եվրոպական Համագործակցության Օրակարգ

{SEC(2008) 2177}

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ծանոթագրություն .....3
Երիտասարդների նախապատրաստում 21-րդ դարի համար.....3
Սույն զեկույցի նպատակը .....4
2. Կենտրոնացում կարողությունների վրա .....6
Առանցքային կարողությունների իրագործում .....6
Գրաճանաչություն և թվերի կիրառման կարողություն .....7
Ուսումնառության անհատականացված մոտեցումներ .....8
Ուսումնառության արդյունքների գնահատում .....9
3. Բարձրորակ ուսումնառություն յուրաքանչյուրի համար .....10
Վաղ ուսումնառության ավելի լավ հնարավորություններ .....10
Օժանդակում համակարգի անաչառությանը .....11
Դպրոցը Վաղ Լքելը .....13
Հատուկ Ուսումնառության Կարիքներ .....14
Դպրոցների զարգացում .....14
4. Ուսուցիչներ և դպրոցական անձնակազմ .....15
Ուսուցիչների Կարողություններ և Որակավորումներ .....15
Դպրոցի Ղեկավարություն .....16
5. Եզրակացություն .....17

# ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՒՅՑԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ, ԽՈՐՀՐԴԻՆ, ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ

## Կարողությունների բարելավում 21-րդ դարի համար. դպրոցների վերաբերյալ Եվրոպական Համագործակցության Օրակարգ

## 1. ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### Երիտասարդների նախապատրաստում 21-րդ դարի համար

1.1 Եվրոպական Միության տնտեսական և սոցիալական փոփոխությունները ստեղծեցին նոր հնարավորություններ և մարտահրավերներ: Երիտասարդներն այժմ ավելին, քան երբևէ կարողությունների ավելի մեծ շառավիղի կարիք ունեն՝ զարգանալու գլոբալիզացված տնտեսությունում և աճող բազմատեսակ հասարակություններում: Շատերը կունենան աշխատանքներ, որոնք դեռևս գոյություն չունեն, այլոք կունենան խորացված լեզվաբանական, միջմշակութային և նախաձեռնական ընդունակությունների կարիք: Տեխնոլոգիան կշարունակի փոխել աշխարհն այնպիսի եղանակով ու արագությամբ, որ մենք նույնիսկ չենք էլ պատկերացնում: Այնպիսի մարտահրավերը, ինչպիսին է կլիմայի փոփոխությունը, կպահանջի արմատական հարմարեցում /ադապտացիա/: Այս բարդ աշխարհում ստեղծարարությունն ու ուսումնառությունը շարունակելու և նորարարելու ունակությունը կհամարվի ոչ ավել, քան գիտելիքի առանձնահատուկ մաս, որը կդառնա բացարձակ: Ցկյանս ուսումնառությունը պետք է դառնա սահմանված կարգ:

1.2 Եվրոպական Խորհուրդը բազմիցս կարևորել է կրթության և ուսուցման առանցքային դերակատարությունը Միության հետագա աճի, երկարաժամկետ մրցունակության և սոցիալական համախմբվածության համար: Վերջիններիս հասնելու համար խիստ կարևոր է լիարժեք զարգացնել Եվրոպական քաղաքացիների նորարարության և ստեղծարարության ներուժը: «Հետազոտություն-նորարարություն-կրթություն» գիտելիքային եռանկյունու կրթության բաղադրիչը պետք է ամրապնդվի հենց սկզբից՝ դպրոցներից: Դպրոցում ձեռք բերված կարողություններն ու ուսումնառության առանձնահատկությունները էական են՝ զարգացնելու նոր հմտություններ նոր աշխատանքների համար դեռ վաղ տարիքում:

1.3 Հանձնաժողովը նշել է[1], որ 21-րդ դարի մարտահրավերների շրջանակում բարեկեցության զարգացումը պահանջում է նոր մոտեցում, որը կենտրոնացած կլինի քաղաքացիների ինքնակատարելագործման համապատասխան *հնարավորությունների*

[1] COM(2007) 726 վերջնական

ապահովման, կրթություն *մուտք գործելու*, զբաղվածության, առողջապահության և սոցիալական ապահովության /*միասնության* համատեքստում/, սոցիալական համախմբվածության և երկարատևության վրա: Այս համատեքստում երիտասարդության համար ներդրումները Հանձնաժողովը որոշարկել է՝ որպես գերակայություն:

1.4 Խորհուրդը հանգել է այն եզրակացության[2], որ Եվրոպայի աճն ու բարգավաճումը կախված է բոլոր երիտասարդների ակտիվ մասնակցությունից: Երեխաների պարտադիր կրթության ձեռքբերումն ունի ուժեղ և անմիջական ազդեցություն նրանց ավելի ուշ սոցիալական մասնակցության, հետագա կրթության կամ ուսուցման, ինչպես նաև աշխատավարձերի վրա: Այնուամենայնիվ, դպրոցական բարձրորակ կրթություն ստանալու հնարավորությունները անհավասար են և, այսպիսով, կրթական համակարգերը հաճախ նպաստում են սոցիալ-տնտեսական անհավասարություններին:

1.5 Կրթության նախարարները պարտավորվել են կատարելագործել կրթական համակարգերի որակն ու անաչառությունը[3]: 2010թ. համար Խորհուրդն ընդունել է երեք նշաձող, որոնք վերաբերում են անմիջապես հանրակրթությանը /դպրոցը վաղ լքողներին, գրաճանաչությանն ու ավագ միջնակարգային կրթությունն ավարտողներին/: Սակայն առաջընթացը դեռ անբավարար է: Համապատասխանաբար, Եվրոպական Խորհուրդը շտապեցրեց անդամ պետություններին էապես կրճատել դպրոցը վաղ լքողների և այն երիտասարդների թվաքանակը, ովքեր չեն կարողանում կարդալ պատշաճ կերպով, ինչպես նաև կատարելագործելու վերաբնակչի կամ այլ կարգավիճակ ունեցող ուսումնառուների ձեռքբերումները[4]:

1.6 Լիսաբոնի Ազգային Բարեփոխումների Ծրագրերի տարեկան վերանայումների ժամանակ Հանձնաժողովն առաջարկել է անդամ որոշ պետություններին կատարելագործել իրենց հանրակրթական համակարգերի առանձնահատուկ հատվածները:

## Սույն զեկույցի նպատակը

1.7 ԵՄ մարտահրավերը դպրոցական համակարգերի բարեփոխումներն ամրապնդելն է, որպեսզի *յուրաքանչյուր* երիտասարդ կարողանա լիարժեքորեն զարգացնել իր հեռանկարը մուտքի կատարելագործված հնարավորության միջոցով՝ դառնալու ակտիվ մասնակից գիտելիքի նոր ստեղծվող տնտեսությունում և խթանելու սոցիալական համախմբվածությունը:

---

2 OJ 2007/C 282/12, 24.11.2007
3 OJ 2006/C 298/03, 8.12.2006
4 Եվրոպական Խորհրդի եզրակացությունները, 2008թ. մարտ, պարագրաֆ 15

1.8 Անդամ պետությունները պատասխանատու են կրթության և ուսուցման կազմակերպման և բովանդակության համար: Եվրոպայի դպրոցների տարատեսակ համակարգերը բաղկացած են նորարարական և գերազանց փորձերից: Մենք պետք է քաղենք միայն լավը այս բազմազանությունից:

1.9 Անդամ պետություններից շատերն այսօր ունեն ցկյանս ուսումնառության ռազմավարություններ, որտեղ հանրակրթությունը զբաղեցնում է կենտրոնական տեղ[5]: Դպրոցին վերաբերող քաղաքականության հիմնախնդիրների շուրջ նրանք միմյանց հետ աշխատում են ավելի ինտենսիվ: Միության դերակատարությունն անդամ պետություններին աջակցելն է տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակումն ավելի հասանելի դարձնելու միջոցով: Այս համագործակցությունը ձևավորվում է նաև արդեն 20 տարվա փորձի շնորհիվ՝ հիմնվելով Ցկյանս Ուսումնառության Ծրագրի և նախորդների գործունեության վրա: Այս համատեղ շարունակական աշխատանքի համատեքստում 2007թ. Հանձնաժողովը նախաձեռնեց «Դպրոցներ 21-րդ դարի համար» հասարակական խորհրդակցություն [6]:

1.10 Անդամ պետությունները աստիճանաբար գիտակցում են համագործակցության շահեկանությունը՝ արձագանքելու այն ընդհանուր մարտահրավերներին, որոնք հստակ ներկայացված են Հանրակրթության[7] և Առանցքային Կարողությունների[8] Որակի Գնահատման վերաբերյալ առաջարկություններում, Արդյունավետության ու Անաչառության[9] և Ուսուցիչների Կրթության Որակի Կատարելագործման[10] վերաբերյալ Խորհրդի եզրակացություններում:

1.11 Հանձնաժողովը խորը հավատ ունի, որ, ելնելով դպրոցական համակարգերի մարտահրավերներից շատերի ընդհանուր բնույթից և ապագայի համար Միության սոցիալ-տնտեսական այս հիմնախնդիրների կարևորությունից, Լիսաբոնի գործընթացի հաջորդ պարբերաշրջանում հանրակրթությունը պետք է գերակայություն լինի:

1.12 Ուստի, սույն զեկույցը հղում է Հանձնաժողովի 2007թ. հասարակական խորհրդատվությանը, հավասար ուսումնառության հարցերով զբաղվող անդամ պետությունների փորձագետների խմբերի վերջին ժամանակներում կատարված աշխատանքին[11], և վերջերս անցկացված միջազգային վիճակագրությանն ու

---

5 COM(2007) 703 վերջնական, պարագրաֆ 2.1

6 SEC (2007) 1009: Պատասխանները վերլուծվել են առանձին զեկույցում, որը կարող եք գտնել http://ec.europa.eu/dgs/education_culture/consult/index_en.html կայքեջում, և ամփոփված են Անձնակազմի Աշխատանքային Փաստաթղթում

7 2001/166/EC; OJ L 60, 1.3.2001

8 2006/962/EC; OJ L 394/10, 30.12.2006

9 OJ C 298/03, 8.12.2006

10 OJ C 300/07, 12.12.2007

11 Առանցքային կարողությունների և ուսումնական պլանների բարեփոխման, Ուսուցիչների և Դասընթացավարների, Մուտքի հնարավորության և սոցիալական ներգրավման, Մաթեմատիկայի, Գիտության և Տեխնոլոգիայի վերաբերյալ:

հետազոտությանը՝ առաջարկելու դպրոցների վերաբերյալ Եվրոպական համագործակցությունն ամրապնդելու օրակարգ[12]՝ որոշարկելով համակարգերի հիմնական մարտահրավերները, որոնք կարող են լավագույնս ամրապնդվել այսպիսի համագործակցության միջոցով: Վերջիններս բաժանվում են երեք հատվածների.

- Կենտրոնացում կարողությունների վրա
- Բարձրորակ ուսումնառություն յուրաքանչյուր ուսանողի համար
- Ուսուցչական անձնակազմ

## 2. ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

### Առանցքային կարողությունների իրագործում

2.1 Խորհուրդը կարևորել է մարդկանց «նոր աշխատանքների համար նոր հմտություններով» ապահովելու և համընդհանուր հմտությունների մակարդակները բարձրացնելու պահանջը՝ ապահովելով «նախնական և շարունակական կրթություն և ուսուցում ամենաբարձր, անգամ գերազանց որակի հմտություններ ու կարողություններ ձեռք բերելու համար՝ պահպանելու և ամրապնդելու վերջիններիս նորարարելու ունակությունը, որը պահանջվում է մեծ մրցունակության, աճի և զբաղվածության համար[13]»:

2.2 Դպրոցների ուսումնական ծրագրերին ուղղված միտումը պետք է օգնի ուսումնառուներին ձեռք բերել գիտելիք, հմտություններ և դիրքորոշումներ, որոնք կիրառելի են կյանքի տարբեր իրավիճակներում: Առանցքային Կարողությունների Եվրոպական Շրջանակը[14] բնութագրում է գիտելիքը, հմտություններն ու դիրքորոշումները, որոնք գիտելիքահենք հասարակությունում հաջողակ կյանքի հիմքն են:

2.3 Կարողություններ ձեռք բերելու համար ուսումնառուները պետք է վաղ հասակից «սովորեն սովորելու համար»՝ էապես ազդելով իրենց ուսումնառության նպատակների, ուսումնառությունն ինքնապատասխանատվությամբ կազմակերպելու, ինքնուրույն և համագործակցությամբ աշխատելու, եթե անհրաժեշտ է, տեղեկատվություն և օժանդակություն ձեռք բերելու, ինչպես նաև նոր տեխնոլոգիաների բոլոր հնարավորությունները կիրառելու վրա:

---

12 «Դպրոց» հասկացությունը այս տեքստում վերաբերում է նախադպրոցական, նախնական, ցածր և ավագ միջնակարգային կրթության, ինչպես նաև մասնագիտական ուսուցման հաստատություններին: Այստեղ բարձրացված հիմնախնդիրները մեծ մասամբ կիրառվում են նաև նախնական մասնագիտական կրթությունում և պետք է իրենց արտահայտությունը գտնեն հետագա աշխատանքում Կոպենհագենի գործընթացի ներքո:

13 OJ 2007/C 290/01, 4.12.2007

14 2006/962/EC Առաջարկ

2.4 Դպրոցի վերաբերյալ խորհրդատվության կարիքը առաջ է քաշում ուսումնառության ավելի ճկուն միջավայր, որն օգնում է ուսանողներին զարգացնել կարողությունների մի շարք՝ միևնույն ժամանակ պահպանելով առանցքային հմտությունների հիմնապաշարը: Առաջարկված մոտեցումները ներառում էին նոր մանկավարժություն, խաչաձև ուսումնապլանային մոտեցումներ՝ հավելելու միաառարկա ուսուցումը, ինչպես նաև ուսանողների լայն ներգրավումն իրենց անձնական ուսումնառության նախագծման գործում:

2.5 Կարողությունները զարգացնող ուսումնական պլանների բարեփոխումը համընդհանուր մոտեցման, առարկաների միջոցով ուսումնառության կազմակերպման, կարողությունների ճշգրիտ ուսուցանման, ուսուցիչների վերապատրաստման ու դիդակտիկ նոր մոտեցումների և, կենսականորեն անհրաժեշտ, ուսուցիչների, ուսումնառուների և այլ դերակատարների լիարժեք ներգրավման կարիք ունի: Նմանապես, դպրոցները պետք է խթանեն աշակերտների ու անձնակազմի առողջապահությանը և բարեկեցությանը, ինչպես նաև ակտիվ քաղաքացիությանը (ներառյալ Եվրոպական համատեքստում): Կարողությունների շարքի ձեռքբերումը, ներառյալ ձեռներեցության կարողություն ձեռք բերելու կրթությունն[15] ու լեզուները, կարելի է ամրապնդել դպրոցում, որտեղ անձնակազմին և ուսանողներին խրախուսում են նորարարել ու ստեղծարարել:

## Գրաճանաչություն և թվերի կիրառման կարողություն

2.6 Գրաճանաչությունն ու թվերի կիրառման կարողությունն առանցքային կարողությունների էական բաղադրիչն են: Չնայած հետագա ուսումնառության համար նրանք հիմնային են համարվում, ԵՄ-ում կատարողականությունը վատթարանում է: Ըստ ԵՄ նշածողի՝ մինչև 2010թ. գրաճանաչության ցածր մակարդակ ունեցող 15տ. երիտասարդների ցուցանիշը պետք է նվազեր և հասներ 17%-ի: Սակայն ցուցանիշը իրականում աճել է 2000թ.-ին 21.3%-ից մինչև 24.1% 2006թ.-ին: Ավելին, տղաները գրեթե երկու անգամ ավելի շատ ունեն գրաճանաչության ցածր հմտություններ, քան աղջիկները՝ 15տ. աղջիկների 17.6% և 15տ. տղաների 30.4%: Գրաճանաչության անկումը պետք է շտապ կասեցնել: Սա համարվում է այն առանցքային մարտահրավերներից մեկը, որ Եվրոպայի դպրոցները ներկայումս ունեն:

2.7 Գրաճանաչությունը կախված է բազմազան գործոններից՝ ընտանիքի գրաճանաչության կուլտուրա, ընտանիքի լեզու, ծնողների և հանրակրթական մանկավարժության ընտրություն և պատկերի վրա հիմնված տեղեկատվական տարբեր միջոցների ազդեցություն: Քաղաքականության լավ փորձերը ներառում են ընտանիքի գրաճանաչության քաղաքականությունները, գրաճանաչության ազգային ռազմավարություններն ու թիրախները, գրաճանաչության ենթակառուցվածքի /գրադարաններ, դասասենյակային նյութեր/ կատարելագործումը:

[15] Տե՛ս կրթության և ուսումնառության միջոցով նախաձեռնական գաղափարներին խթանելու վերաբերյալ Հանձնաժողովի Զեկույցը, COM (2006) 33 վերջնական

2.8 Մաթեմատիկական, թվերի կիրառման կարողությունները և գիտության ընկալումը նույնպես ունեն կենսական անհրաժեշտություն գիտելիքահենք հասարակությունում լիարժեք մասնակցության և արդի տնտեսությունների մրցունակության համար: Երեխաների առաջին փորձերը վճռական են, սակայն ուսանողներին շատ հազվադեպ են անհանգստացնում մաթեմատիկական գիտելիքները, իսկ շատերը դրանից խուսափելու համար խեղաթյուրում են իրենց ուսումնառությունը: Դասավանդման տարբեր մոտեցումները կարող են բարելավել դիրքորոշումները, բարձրացնել ձեռքբերման մակարդակները և ստեղծել ուսումնառության նոր հնարավորություններ[16]:

## Ուսումնառության անհատականացված մոտեցումներ

2.9 Յուրաքանչյուր ուսումնառուի կարիքները տարբեր են: Յուրաքանչյուր դասարան սեռի, սոցիալ-տնտեսական կարգավիճակ ունեցողների, ընդունակների կամ անընդունակների, մայրենի լեզուների և ուսումնառության ոճերի մեծ բազմազանության ոստան է: Կարողությունների կատարելագործում կնշանակի դասավանդում ավելի անհատականացված ճանապարհով:

2.10 Յուրաքանչյուր երեխայի կարիքներին համապատասխան ավելի լավ դասավանդումը կարող է մեծացնել ուսանողի հետաքրքրությունն ու մասնակցությունը ուսումնառության գործընթացներում և կատարելագործել նրանց ձեռքբերման արդյունքները: Սակայն դա իր շահավետությամբ պետք է հասանելի լինի հավասարապես բոլոր ուսանողների համար:

2.11 Դպրոցում անհատի ունեցած դժվարությունների վաղ որոշարկումն ու կանխարգելիչ համապարփակ ռազմավարություններն ամենաէական ուղիներն են՝ կրճատելու դպրոցը վաղ լքողների թվաքանակը: Տարբեր դասարաններում արդյունավետ աշխատելու համար ուսուցիչներին անհրաժեշտ է հատուկ վերապատրաստում: Կրթության և ուսուցման ավելի ճկուն ուղիները կօգնեն՝ ավարտելու հանրակրթությունը և երաշխավորելու, որ բոլոր ուսանողները պատրաստ են ցկյանս ուսումնառությանը:

## Ուսումնառության արդյունքների գնահատում

2.12 Հետազոտությունը ցույց է տալիս, որ գնահատման ճշգրիտ նախագծումը, որի նպատակն է խթանել ուսումնառությունը, չափորոշիչներ ստեղծելու և ցկյանս

[16] Գիտությանն ու մաթեմատիկային ուղղված օժանդակությունն ԵՄ Հետազոտական Յոթերորդ Շրջանակային Ծրագրի նպատակն է. շեշտը դրվում է դպրոցներում տեղեկությունների հավաքագրման և խնդիրների վրա հիմնված դասավանդման տեխնիկայի, ինչպես նաև լավագույն փորձի փոխանակմանը նպաստելու վրա:

ուսումնառուներին հնարավորություններ տալու հզորագույն գործիքներից մեկն է, հատկապես ձեռքբերման ցածր մակարդակ ունեցող աշակերտների շրջանում: Այնուամենայնիվ, գնահատումը շատ հաճախ օգտագործվում է պարզապես աշակերտներին գնահատելու համար, այլ ոչ թե օգնելու նրանց՝ կատարելագործվելու: Թեստերը միշտ չէ, որ գնահատում են աշակերտների կարողությունները:

2.13 Կարողությունների կատարելագործումն ընդգրկում է ֆորմատիվ[17] գնահատման ավելի լայնատարած կիրառումը՝ խնդիրները վաղ որոշարկելու և դրանց արձագանքելու համար, ինչպես նաև ուսումնառության արդյունքների համաձայնեցված չափորոշիչների վրա հիմնված ամփոփիչ[18] գնահատման ավելի փորձված տեխնիկաների մշակումը: Ուսուցիչներն ունեն բավականաչափ ինքնուրույնություն աշակերտների գնահատման գործում. նրանց վերապատրաստումը պետք է արձագանքի վերոհիշյալ հիմնախնդիրներին:

**Ցկյանս Ուսումնառության Առանցքային Կարողությունների վերաբերյալ Առաջարկի իրագործման աշխատանքում անդամ պետություններին աջակցելու համար Հանձնաժողովն առաջարկում է կենտրոնացնել հետագա համագործակցությունը.**

- **գործողության պլանների մշակում՝ բարձրացնելու գրաճանաչության և թվերի կիրառման մակարդակները՝ ներառյալ թիրախների սահմանման կիրառումը,**
- **թեքումով, ինչպես նաև առարկայի վրա հիմնված կարողությունների ամրապնդում, մասնավորապես «սովորելու համար սովորելը», և**
- **կարողությունների զարգացման համար համապարփակ մոտեցման ընդունում՝ ընդգրկելով ուսումնական պլանները, ուսումնառության նյութերը, ուսուցիչների վերապատրաստումը, անհատականացված ուսումնառությունը և գնահատման տեխնիկաները:**

## 3. ԲԱՐՁՐՈՐԱԿ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՀԱՄԱՐ

3.1 Բոլոր երիտասարդներին ողջ կյանքի համար կարողությունների լիարժեք շարքով ապահովելն անաչառության մարտահրավեր է: Ոչ մի հանրակրթական համակարգ բոլոր աշակերտների համար չի ապահովում կրթության միևնույն հնարավորությունները:

[17] Գնահատում, որն ապահովում է հետադարձ կապ և օգտագործվում է՝ կազմակերպելու դասավանդումն այնպես, որ վերջինս բավարարի ուսումնառուի կարիքները և օգնի նրան ազդել իր իսկ առաջընթացի վրա

[18] Ամփոփում է ուսումնառությունը, որն ուժի մեջ է եղել որոշակի ժամանակահատվածում

Դպրոցների որակի թերությունները պետք է հարթվեն: Վերջին ժամանակահատվածում կատարված հետազոտությունը ցույց է տալիս, որ ուսանողի ձեռքբերման միավորների քիչ փոփոխությունը կարող է համատեղելի լինել բարձր մակարդակի միջին ձեռքբերման հետ և առաջարկում է, որ քաղաքականություն մշակողները կրճատեն անհավասարությունների քանակն ու կատարելագործեն մասնակցությունը՝ թիրախ համարելով հմտությունների ցածր մակարդակ ունեցողներին: ԵՄ նշածողը սահմանել է, որ մինչև 2010թ. երիտասարդների առնվազն 85%-ը պետք է ունենա լիարժեք ավագ միջնակարգային կրթություն: 2007թ. 20-24տ. անձանց միջին ցուցանիշը 78.1% է, այսինքն՝ 2000թ. ի վեր միայն 1.5%-ի բարելավվում:

3.2 2006թ. Եվրոպական Գարնանային Խորհուրդը հանգեց այն եզրակացության, որ բարեփոխումները պետք է առաջ քաշվեն՝ ապահովելու կրթության և ուսուցման համակարգերի բարձր որակը, որոնք և՛ արդյունավետ են, և՛ անաչառ[19]: Կարիք կա նաև ավելի լավ հասկանալու և կրճատելու ուսումնառուների սոցիալ-տնտեսական կարգավիճակի և ուսումնառության արդյունքների միջև հարաբերակցությունը:

3.3 Դպրոցների խորհրդատվության արդյունքում ստացված եզրակացությունները շեշտադրում էին վաղ ուսումնառության հնարավորությունների և հանրակրթական ներառական համակարգերի կարևորությունը, որոնք ներգրավում են տարբեր կարգավիճակներ ունեցող աշակերտներին միևնույն կրթական համակարգի մեջ՝ միաժամանակ ցուցաբերելով հավելյալ օժանդակություն թերի ընդունակ և հատուկ կարիքավոր ուսանողներին:

## Ուսումնառության ավելի լավ հնարավորություններ

3.4 Նախադպրոցական կրթությունը կարող է կրճատել սոցիալական ցածր կարգավիճակ ունեցող և ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաների կրթության թերությունները: Այն կարող է խթանել լեզվի կամ երկրորդ լեզվի ուսուցմանը: Ինտենսիվ, բազմահամակարգային մոտեցումներն առաջարկում են երկարաժամկետ տպավորիչ արդյունքներ և կարող են հանգեցնել շահույթի ամենաբարձր ցուցանիշների ցկյանս ուսումնառության ամբողջ գործընթացի ընթացքում, հատկապես թերի ընդունակների համար: Փաստերը վկայում են, որ նախադպրոցական կրթությունը կատարելագործում է երեխաների միջին ձեռքբերումը, ուշադրությունը և մասնակցությունը դասապրոցեսին նախնական դպրոցում: Երեխաների վաղ կրթությունը պետք է կենտրոնանա ոչ միայն հանրակրթության կատարողականության, այլ նաև սոցիալական և զգացմունքային խնամքի վրա: Այն պետք է կապակցված լինի սոցիալական լայն ծառայությունների հետ, իսկ անձնակազմը մասնագիտական վերապատրաստման և որակավորումների անհրաժեշտություն կունենա:

[19] Եվրոպական Խորհրդի եզրակացությունները, 2006թ. մարտ

3.5 Անդամ պետությունները ձգտում են ընդհանրացնել նախադպրոցական կրթությունն ու խնամքը: 2002թ. Խորհուրդը համաձայնության եկավ, որ անդամ պետությունները պետք է ապահովեն երեխային տրամադրվող խնամք 3տ. և պարտադիր հանրակրթության տարիքում գտնվող երեխաների առնվազն 90, իսկ 3տ.-ից ցածր երեխաների առնվազն 33%-ին[20]: 2000-2005թթ. 4տ. երեխաների մասնակցությունը կրթությանն աճեց 3%-ով և հասավ մինչև 85%-ի, սակայն անհավասարության ծավալները դեռ մեծ են՝ 99%-50%[21]: Նախադպրոցական կրթության զարգացումն ու մուտք գործելու հնարավորության ընդլայնումը հնարավոր այն ամենակարևոր ավանդն են, որ հանրակրթական համակարգերը կարող են ունենալ բոլորի համար հնարավորությունների կատարելագործման և Լիսաբոնի նպատակներին հասնելու գործում:

## Օժանդակում համակարգի անաչառությանը

3.6 Հետազոտությունը ցույց է տալիս, որ ամենաարդյունավետ հանրակրթական համակարգերը մեծ ակնկալիքներ են ստեղծում բոլոր աշակերտների և, հատկապես, նրանց համար, ովքեր չունեն մեծ ակնկալիքներ իրենց տանը: Համակարգերը պետք է ձգտեն՝ երաշխավորելու, որ ոչ մի «ձախողում» չի ակնկալվում վերջնական արդյունքում և ոչ մի երեխա չի ավարտում դպրոցն այն համոզումով, որ ի վիճակի չէ սովորելու:

3.7 Քաղաքականությունները, որոնք ձգտում են՝ ապահովելու ուսումնառության ճկուն ուղիներ՝ ըստ յուրաքանչյուր անհատի կարիքների, կարող են օգնել՝ օժանդակելու համակարգի անաչառությանը: Սա նշանակում է ուսումնառության «փակուղիների» հեռացում, ուղղորդման ամրապնդված համակարգեր և ավելի լավ հնարավորություններ՝ անցնելու կրթության մի մակարդակից մյուսին կամ մի տեսակից մյուսին /օր՝. մասնագիտական կրթությունից բարձրագույն կրթություն/:

3.8 Խորհուրդը հիշատակեց, որ «հետազոտության առկա փաստերը ցույց են տալիս, որ որոշ դեպքերում չափազանց վաղ տարիքում երեխաների ներգրավումը տարբեր տեսակի առանձին դպրոցների մեջ՝ ըստ ունակության, կարող է բացասապես ազդել թերի ունակ աշակերտների ձեռքբերումների վրա»[22]: Մատչելի փաստերի ամբողջ ծավալը վկայում է, որ վաղ տարիքում տարբեր տեսակի դպրոցների մեջ ներգրավումը կարող է սրել աշակերտների կրթության ձեռքբերման տարբերությունները սոցիալական կարգավիճակի պատճառով: Սա բարդ երևույթ է, և անդամ պետությունների համագործակցության մի շրջանակ կա՝ որոշարկելու քաղաքականություններին ուղղված գործողությունների ճշգրիտ խումբը:

---

20 Նախագահության եզրակացությունները, Բարսելոնայի Խորհուրդ, 2002թ. մարտ
21 COM (2007) 703 վերջնական
22 OJ C 298/3, 8.12.2006

3.9 Որոշ հանրակրթական համակարգերում աշակերտների 25%-ն ինչ-որ կետում կրկնում է միևնույն ուսումնական տարին, մինչդեռ այլ համակարգերում հազվադեպ է պատահում այս երևույթը: Սա թանկարժեք տեխնիկա է: Ուսումնառության կրկնության ցուցանիշներն էապես բարձր են սոցիալ-տնտեսական խմբերի թերի ունակ երեխաների համար: Կրկնություն անցած երեխաների ձեռքբերումները հաճախ ավելի քիչ են, քան այն թույլ երեխաներինը, ովքեր չեն անցնում կրկնության շրջան: Դրա փոխարեն որոշ երկրներ անձնակազմի օժանդակությամբ օգտագործում են ֆորմատիվ գնահատումը կարճ, ինտենսիվ միջանկյալների կամ անհատական դասընթացների հետ միասին: Այսպիսի տեխնիկաներում անհրաժեշտ է ուսուցիչներին վերապատրաստել :

3.10 Անձնակազմի, սոցիալական, մշակութային կամ տնտեսական հանգամանքների բերումով առաջացած թերությունները կարող են խոչընդոտ դառնալ երեխաների կրթության համար: Դրանք, իրենց հերթին, կենտրոնական մարտահրավեր են ԵՄ հանրակրթական համակարգերին: Աղքատությունն արգելք է հանդիսանում անհատների իմացական զարգացման և, ի վերջո, նրանց կրթության ձեռքբերման համար: Անբարենպաստ պայմաններ ունեցող երեխաները դպրոցում լավ սովորելու, առողջության հետ կապված խնդիրներ չունենալու, աշխատաշուկային և հասարակությանը ինտեգրվելու, ինչպես նաև հանցագործությունից խուսափելու ավելի քիչ հավանականություն ունեն[23]: Վերաբնակչի կարգավիճակ ունեցող ուսանողների մարտահրավերներն արձագանք են գտել Հանձնաժողովի առանձին փաստաթղթում[24]:

3.11 Միայն դպրոցները չեն կարող փոխհատուցել աշակերտների սոցիալական անապահովությունը: Խնդրի լուծումը պահանջում է գործընկերություն՝ ներառյալ ընտանիքներ, սոցիալական ծառայություններ, տեղական ինքնակառավարման մարմիններ և առողջապահական ծառայություններ՝ կանխելու աղքատության և բացառման փոխանցումը հաջորդ սերունդներին:

3.12 Հանրակրթությունն ընդհատած աշակերտների մեծ ցուցանիշներ ունեցող դպրոցները պետք է ազատեն աշխատանքից այն ուսուցիչներին, ովքեր սրում են խնդիրները: Նախարարները համաձայնության են եկել, որ պետք է խրախուսել հատկապես թերի հատվածների բարձրորակ դասավանդման ապահովումը[25]: Անապահով աշակերտներին ոգևորող դպրոցներին հատկացվող ֆինանսական աջակցությունը կարող է նվազեցնել աշակերտների սոցիալական կարգավիճակի տարբերությունները:

## Դպրոցը Վաղ Լքելը

---

23 Եվրոպական Խորհուրդ, *Համատեղ զեկույց սոցիալական ապահովության և սոցիալական ներգրավման վերաբերյալ,* 2007թ., էջ 5

24 COM(2008) 423

25 OJ C 298/3, 8.12.2006

3.13 Դպրոցը վաղ լքել նշանակում է ներուժի վատնում: Այն հանգեցնում է սոցիալական /սոցիալական անկում, առողջապահական համակարգի մեծացված պահանջ և սոցիալական քիչ կապակցվածություն/ և տնտեսական ծախսերի /ցածր արտադրողականություն, հարկային ցածր եկամուտներ և բարեկեցության բարձր վճարներ/: Դրանց գումարվում է նաև ցածր մակարդակի հմտությունները, գործազրկությունը, ողջ կյանքի ընթացքում ցածր աշխատավարձերը, քիչ մասնակցությունն ուսումնառությանը հետագա կյանքի ընթացքում և հարմարվողական լինելու քիչ ունակությունը:

3.14 Աճի և Աշխատանքների վերաբերյալ 2007թ. Լիսաբոնի զեկույցում Հանձնաժողովն որոշ անդամ պետություններին հատուկ առաջարկ արեց՝ բարելավելու կատարողականությունը դպրոցը վաղ լքելը կանխելու գործընթացում: Եթե անդամ պետությունների դպրոցը վաղ լքելու ցուցանիշները միմյանցից էապես տարբերվում են, ապա դրա անբավարար լինելու փաստը միշտ առկա է: Սոցիալական բազմաթիվ խնդիրներով ընտանիքների երեխաները բոլոր երկրներում ներկայացված չեն դպրոցից դուրս մնացողների շարքերում[26]:

3.15 Քաղաքականություններին ուղղված ջանքերն ու ռեսուրսներն Եվրոպական Կառուցվածքային Հիմնադրամների միջոցով բարելավում են իրավիճակը, սակայն առաջընթացը դեռևս չափազանց դանդաղ է: Ըստ ԵՄ նշածողի՝ մինչև 2010թ. երիտասարդների միայն 10%-ը պետք է դպրոցը վաղ լքի: 2007թ. 18-24տ. երիտասարների ԵՄ միջին ցուցանիշը դեռևս 14.8% էր, այսինքն՝ 2.8%-ով ավելի ցածր, քան 2000թ.-ին: 2008թ. նախարարները քննարկեցին այն միջոցները, որոնցով հնարավոր կլինի պայքարել դպրոցից դուրս մնալու դեմ՝ ներառյալ նորեկների կարողությունների և այլ հմտությունների ամրապնդումը՝ հասնելու իրենց հասակակիցների մակարդակին, իրենցից «վտանգ» ներկայացնող անձանց վաղ որոշարկումը և նրանց ծնողների ու ուսուցիչների համագործակցության խթանումը, հետդպրոցական ուսումնառության գործընթացների ապահովումը, ինչպես նաև դպրոցական մի մակարդակից մյուսին անցնելու ընթացքում աջակցության շարունակականության բարելավումը:

3.16 Եթե երկրորդ հնարավորություն տվող դպրոցները շատ կարևոր են, ապա պետք է նաև սերտ համագործակցություն ծավալել ընդհանուր և մասնագիտական կրթության ու ուսուցման հատվածների միջև և միջոցներ ձեռնարկել՝ դպրոցները դարձնելու ավելի գրավիչ:

## Կրթության Հատուկ Կարիքներ

3.17 Կրթության հատուկ կարիքներով ուսանողներին պետք է աջակցել ներառական կրթության միջոցով, իսկ ներառական մոտեցումները կարող են օգնել բոլոր ուսանողներին[27]:

---

26 SEC(2007)1284, պարագրաֆ 1.1.2

27 *Ներառական կրթություն և դասարանական փորձեր միջնակարգ կրթությունում*, Հատուկ Կարիքների Կրթության Զարգացման Եվրոպական Գործակալություն, Ամփոփիչ Զեկույց, 2005

Չնայած քաղաքական մեծ ջանքերին, ԵՄ աշակերտների ավելի քան 2%-ն ուսուցանվում է ուսումնառության խտրականացված ձևաչափերով կրթության իրենց հատուկ կարիքների պատճառով:

3.18 Ներառման ձեռքբերումն /միևնույն ժամանակ աջակցությունը հատուկ կարիքավոր անձանց/ ենթադրում է ուսումնառության աջակցության կազմակերպման քաղաքականությունների վերանայում, դպրոցների և այլ ծառայությունների միջև համագործակցության բարելավում, ինչպես նաև անհատականացված ուսումնառության իրագործում: Յուրաժամ և ճկուն աջակցությունը կարող է օգնել ժամանակավոր ուսումնառություն անցնող և հարմարվելու խնդիրներ ունեցող անձանց ներգրավվելու, այլ ոչ թե նրանց տեղափոխելու ուսումնառության խտրականացված ձևաչափեր:

## Դպրոցների զարգացում

3.19 Դպրոցները պետք է բավական ճկուն լինեն՝ շարունակաբար հարմարվելու փոփոխվող միջավայրին, ինչպես նաև աշակերտների, անձնակազմի, ծնողների ու հիմնական գործընկերների փոփոխվող կարիքներին:

3.20 Շատ երկրներում դպրոցների տեսչավորման դերակատարությունը վերահսկողությունից փոխվում է աջակցության և խթանման: Դպրոցների ցանցավորումը /օր.՝ դպրոցների Comenius գործընկերությունները կամ eTwinning-ը/ կարող է արագացնել նորարարական գործընթացը: Սիստեմատիկ և պարբերաշրջանային ինքնագնահատումն արդյունավետ է փոփոխության ուղղությունները որոշարկելու համար դպրոցներին օգնելու գործում: Խորհուրդը հանգել է այն եզրակացության, որ դպրոցները պետք է զագանան՝ որպես «ուսումնառության համայնքներ»[28]: Շատ դպրոցներ բացահայտում են իրենց հնարավորությունները տեղական ավելի լայն հասարակությանը և ավելի սերտ կապեր են հաստատում տեղական ձեռնարկությունների հետ:

3.21 Եվրոպայում վերջերս իրականացվել է բարեփոխումների մի մեծ շարք՝ մեծացնելու դպրոցների ինքնավարությունը: Ինքնավարության տարբեր տեսակների, ուսանողի կատարողականության հետ նրանց կապերի, արտաքին քննությունների, հաշվետվության և ընտրության լավ որակ ձեռք բերելու համար շատ աշխատանք է պահանջում: Պետք է նաև հասկանալ, թե ինչպես կարող է մեծացված ինքնավարությունը ծառայել համակարգի անաչառությանը:

[28] OJ C 300/07, 12.12.2007

Կրթության և ուսուցման ոլորտում արդյունավետության և անաչառության վերաբերյալ Խորհրդի եզրակացություններն իրագործելու աշխատանքում անդամ պետություններին աջակցելու համար Հանձնաժողովն առաջարկում է հետագա համագործակցությունը կենտրոնացնել.

- բարձրորակ նախադպրոցական կրթություն մուտք գործելու հնարավորության ընդհանրացում,
- հանրակրթական համակարգերի անաչառության ազդեցության որոշարկում և բարելավում, ինչպես նաև դպրոցների որակի տարբերությունների կրճատում,
- երաշխավորում, որ հանրակրթական համակարգերը հեշտացնում են անցումը դպրոցի տարբեր տեսակների և մակարդակների միջև,
- դպրոցը վաղ լքողների թվաքանակի կրճատում,
- հատուկ կարիքավոր աշակերտներին յուրաժամ աջակցության և ուսումնառության անհատականացված մոտեցումների ապահովում:

## 4 ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ

### Ուսուցչի Կարողություններ և Որակավորումներ

4.1 Ուսուցչի որակն աշակերտի կատարողականության վրա ազդող ամենակարևոր ներդպրոցական գործոնն է: Որպես այդպիսին՝ այն ունի կենսական անհրաժեշտություն Լիսաբոնի նպատակներին հասնելու համար: Մանկավարժի մասնագիտությամբ աշխատում են բարձր տոկոսային հարաբերությամբ տարեց մարդիկ՝ ուսուցիչների 30%-ը մոտ 50 տարեկան է և նրանցից մոտ երկու միլիոնին պետք է փոխարինել հաջորդ 15 տարիների ընթացքում՝ պահպանելու դասավանդող աշխատուժի թվաքանակը: Անձնակազմին հարկավոր են հմտություններ՝ յուրաքանչյուր աշակերտին տալու համապատասխան հնարավորություններ, որպեսզի ձեռք բերեն անհրաժեշտ կարողություններ դպրոցի անվտանգ և գրավիչ միջավայրում՝ հիմնվելով փոխադարձ հարգանքի ու համագործակցության վրա, որը խթանում է սոցիալական, ֆիզիկական և մտավոր բարեկեցությանը, որտեղ կռվարարությունն ու բռնությունն ոչ մի տեղ չունեն[29]: Սակայն դեռ շատ երկրներ անկում են գրանցում դասավանդման հմտություններում: Բացի դրանից, շարունակական ուսուցման ու զարգացման համար ներդրումները և դրանց ուղղված խթանները շատ թույլ են: Ընդհանուր առմամբ ներծառայողական ուսուցմանը տրամադրվող ժամանակը նվազագույնն է, և շատ անդամ պետություններ նոր ուսուցիչների հանդեպ ցուցաբերում են ոչ սիստեմատիկ աջակցություն:

[29] Ibid

4.2 2007թ. նախարարները համաձայնության եկան մանկավարժությունը դարձնել կարիերայի ավելի գրավիչ ուղղություն, կատարելագործել ուսուցչի կրթության որակը և ապահովել նախնական կրթություն, վաղ տարիքում կարիերայի օժանդակում /մակածություն/, ինչպես նաև նպաստել մասնագիտական զարգացմանը, որը համակարգված է և համապարփակ: Ուսուցիչներին իրենց կարիերայի ընթացքում անհրաժեշտ են բավարար դրդապատճառներ՝ վերանայելու իրենց ուսումնառության կարիքները և ձեռք բերելու նոր գիտելիք, հմտություններ և կարողություններ՝ ներառյալ լեզվի իմացությունը:

4.3 Դպրոցի վերաբերյալ խորհրդակցությունն ընդգծում է ուսուցչի նախնական կրթությունում տեսության և պրակտիկայի միջև անհավասարության բարելավման կարիքը, ինչպես նաև դասավանդման ներկայացումը՝ որպես խնդիրները լուծող գործունեություն կամ ընթացքի մեջ հետազոտություն, որը կապված է երեխաների ուսումնառության և առաջընթացի հետ: Անձնակազմը պետք է բավարար ժամանակ ունենա վերապատրաստման և մասնագիտական զարգացման համար: Որոշ երկրներում ուսուցիչների աշխատանքային պայմանները, ներառյալ վարձատրությունը, վկայակոչվել են՝ որպես առանցքային հիմնախնդիրներ:

4.4 Վերջին ժամանակներում կատարված հետազոտությունը ցույց է տալիս, որ ամենալավ կատարողականություն ունեցող կրթահամակարգերը մանկավարժության մասնագիտության մեջ ներգրավում են ամենաընդունակ մարդկանց, կիրառում են արդյունավետ միջոցներ՝ ընտրելու ճշգրիտ թեկնածուներ, որոնք կդառնան ուսուցիչներ, կանխում են վատ կատարողականությունը, որդեգրում են ուսուցչի կրթության կարիերայի ողջ ընթացքը ներգրավող և գործնական մոտեցում, ինչպես նաև ստեղծում են դպրոցական այնպիսի միջավայրեր, որտեղ ուսուցիչները փոխանցում են գիտելիքները մեկը մյուսին:

## Դպրոցի Ղեկավարությունը

4.5 Դպրոցներն աստիճանաբար դառնում են բարդ և ինքնավար հաստատություններ: Նրանց ղեկավարման համար անհրաժեշտ են բազմազան հմտություններ: Միտումը կառավարման ավելի գործակցական ոճերի և բաշխված ղեկավարման ստեղծումն է, որն ավելի սերտորեն կապակցված կլինի դպրոցի ղեկավարման հետ: Սա պահանջում է ավելի շատ ուսուցիչներ ու դասընթացավարներ, ովքեր կարողացել են զարգացնել իրենց ղեկավարման որակները[30]: Ղեկավարի պաշտոնը համալրելն աստիճանաբար դժվարանում է. անդամ շատ պետություններ հանդիպում են մեծ դժվարությունների դպրոցի տնօրեններ նշանակելիս:

4.6 Վերջին փաստերը ցույց են տալիս, որ դպրոցի ղեկավարումը պետք է վերակենտրոնանա այն խնդիրների վրա, որոնք ամենաարդյունավետն են՝ բարելավելու ուսումնառուի ուսումնառությունը. դպրոցի ղեկավարման համար անհրաժեշտ առաջադրանքների

[30] «Ուսուցիչներ և Դասընթացավարներ», Քաղաքականության գլխավոր եզրահանգումները, 2005-2007

բաշխումը կարող է մեծացնել հանրակրթության արդյունավետությունը, իսկ ղեկավարման մեջ ներառված անձանց հարկավոր է համապատասխան վերապատրաստում իրենց կարիերայի ընթացքում. դպրոցի տնօրենի պաշտոնի համալրումը պետք է լինի մասնագիտացված[31]:

**Ուսուցչի կրթության որակի կատարելագործման վերաբերյալ Խորհրդի եզրակացություններն իրագործելու աշխատանքում անդամ պետություններին աջակցելու համար Հանձնաժողովն առաջարկում է կենտրոնացնել հետագա համագործակցությունը.**

- **երաշխավորել, որ ուսուցիչների նախնական կրթությունը, պաշտոնի նշանակումը և մասնագիտական շարունակական զարգացումը համակարգված են, համապարփակ, համապատասխանորեն ռեսուրսավորված, իսկ որակը՝ ապահովված, կատարելագործել մատակարարումը, որակը, ինչպես նաև նախաձեռնել ուսուցչի «ծառայողության մեջ կրթություն»-ը,**
- **վերանայել ուսուցչի պաշտոնի համալրումը՝ ձեռք բերելու ընդունակ թեկնածուներ, ընտրելու ամենալավ դիմորդներին և տեղակայելու լավ ուսուցիչների մարտահրավերներ ունեցող դպրոցներում,**
- **կատարելագործել դպրոցի ղեկավարների պաշտոնի համալրումը և կենտրոնացնել նրանց ուշադրությունն աշակերտի ուսումնառության ու դպրոցի անձնակազմի զարգացման վրա:**

## 5 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

5.1 Սույն զեկույցն որոշարկել է այն հատվածները, որտեղ փոփոխությունները, երբեմն արմատական, անհրաժեշտ կլինեն, եթե Եվրոպայի դպրոցները ցանկություն ունենան մարդկանց լիարժեքորեն պատրաստել կյանքին: ԵՄ համակարգերում արդեն կա նորարարության և գերազանց քաղաքականության փորձի տպավորիչ մի շարք, սակայն դրանք հաճախ մնում են ազգային սահմանների ներսում: Անդամ պետությունները պետք է համագործակցեն դրանք ավելի լավ կապիտալիզացնելու համար:

5.2 Հետևաբար, Հանձնաժողովն առաջարկում է օրակարգ վերոնշյալ երեք ամփոփիչ աղյուսակներում համագործակցության համար սահմանված հիմնախնդիրների վերաբերյալ՝ հատկապես կենտրոնանալով Եվրոպական Խորհրդի կողմից կարևորված այնպիսի հիմնախնդիրների կատարողականությունը զարգացնելու եղանակի վրա, ինչպիսիք են գրաճանաչության կատարելագործումը, նախադպրոցական կրթություն մուտք գործելու հնարավորության ընդլայնումը և ուսուցչի կրթության ամրապնդումը: Սույն համագործակցության օրակարգի փոխանակումները պետք է նախաձեռնել կրթության և

[31] *Դպրոցի Ղեկավարման Կատարելագործում,* OECD 2008

ուսուցման Համակարգման Բաց Մեթոդի միջոցով, որին կարող է օժանդակել Ցկյանս Ուսումնառության Ծրագիրը՝ միևնույն ժամանակ ընդգծելով անդամ պետությունների Լիսաբոնի Ազգային Բարեփոխումների Ծրագրերում կարևորված առանցքային մարտահրավերները: